ՅԳ.

Բ

Պատմեցից ինչ ինչ սքանչելի և զարմանալի՝ ի պատիւ երեսաց այնմ, որ քաջ՝ հիւսիսականին է զակատեալ ի սէր. զոր աչօք իմովք տեսի և սքանչացայ, որ դիպաւ ի 5 դեկտեմբերի. զի իբրև զանցեալ զսախզ հասաք ի քառայ պուռնու անուանեալ լեառն, յանկարծուստ իմն երևեցաւ փոքր նաւ մի մոսկոֆեան պայրախով ի թիկանց լերին, որ պարզեալ զառագաստն՝ գալով գայր օռձայ ի մեզ. զոր ընդ տեսանելն մեր խաբուտանն՝ փութացաւ եդ պայրախ, և արկ թնդանօթ մի խումպառայով. և երկուցեալ թերևս ի նաւարտակաց ծովուն անտի ոք իցէ մոսկոֆեան պայրախով. և ինքն կազմեցաւ ի մարտ պատերազմի, զի մի՛ անհոգս՝ գտցի անպատրաստ. զամենայն պատրաստութիւն պատրաստեցաւ՝ թնդանօթից, թիւֆէնկից, փիշտոֆից՝ սուսերաց և զինուց, զամենայնն ալէստայ եղեալ ի միջի. ապա հրաման ետ ամենայն ումեք՝ եթէ ճանապարհորդաց և եթէ նաւավարաց ելանել ի վեր արտաքս, զի բազմութիւն երևեսցի։

Գայր նաւն մոսկոֆեան յոխորտանօք, յորում էին աւելի քան զերեսուն և քառասուն ոգիք. մերձեցաւ և անց զառաջեաւ մերով ճոխանալով, գնաց մեկնեցաւ ի մէնջ հարուստ մի. դարձեալ՝ փօճալամիչ արար՝ դարձաւ ընդ կրունկն՝ եկն մօտեցաւ ի մեզ ի թիկանց մերոց, բարբառեցաւ ընդ մեզ փողովն, ողջոյն ետ մեզ և եհարց ինչ ինչ. ապա հեղան զեղան արք տասն անտի ի նաւակն իւրեանց՝ գալ քննել և տեսանել զնաւն մեր, եդին ի նաւակն և զթիւֆէնկս բազումս և զէնս. և գաղեցին ընդ քէպէով իւրեանց, և ինքեանք զոյգ մի փիշտովով ի մէջսն և սուր առընթեր կախեալ, գային կատաղաբար առ մեզ. և յաչաց նոցա հուր ցայտէին։ Իսկ խաբուտանն մեր հրամայեաց ամենայն նաւավարաց՝ առնուլ թիւֆէնկ ի ձեռս և դնել փիշտոֆ ի մէջս և կախել սուր առ զստեամբ. և պար առեալ շար ի շար կանգնիլ ի կողմն՝ ուստի ունին ի վեր ելանել. և ոչ թողուլ զոք բաց ի մէն միոյ միայնոյ ի վեր ելանել մտանել, և եթէ տեսանէք զիս պարպել զփիշտոֆ, հարէք և զամենեսին և խնայէք։ Իբրև ամենեքեան այսպէս պատրաստեցան կարգեցան, և կացին կազմ իւրաքանչիւր յիւրում կայի, ահա և նաւակն եկն եհաս՝ մերձեցաւ ի նաւն մեր։ Այլ նոքա զհասանիլն և զեղանիլն ի մեր նաւն մի առնել խնդրէին. թողին ամենեքին զնաւակն առանց պարանաւ ինչ հաստատելոյ՝ կէսք յայս ինչ պարան ձեռն արկեալ, և կէսք յայլ ինչ, ոմն յայս և ոմն յայլ ձեռնամխեալ՝ ի վեր անդր սողալ զեռալ սկսան. ձայն ետուն ի վերուստ խիզախմամբ նաւավարքն մեր՝ կացին հակառակ նոցա չելանել ի վեր բաց ի միոյ միայնոյ. այլ նոքա հեստեցին բանիցն սոցա, նախատինս համարեցան անձանց իւրեանց զայս. զի զողոց և աւազակաց սակս են այս օրէնք ասեն. և յերկուց կողմանց ջեռան և բորբոքեցան և անկան զբանիւք. նոքա ի ներքուստ անտի սողալ ի վեր խնդրէին, և սոքա ի վերուստ զթիւֆէնկս ուղղեալ սպանանել սատակել ձեռն արկին. բարձրացաւ աղաղակ չփոթի և աղմկին, եհաս ի վերայ խաբուտանն ի փուփայէն, արարին խաղաղութիւն ի միջի, արգել բաց ի միոյ միայնոյ ի վեր ելանել. նոքա թէպէտ և զայրացան և կրճտեցին զատամունս իւրեանց, այլ զի չէին ինչ ձեռնհաս լռեցին, և մի միայն ի նոցանէ ել ի վեր. բայց և նորա հատաւ գոյն յերեսացն և բան ի բերանոյն. չփոթեցաւ յանձն իւր և չգիտէր զինչ խօսիլ. սկսաւ թօթովել և կակազել ինչ ինչ, և ոչ ծանուցաւ ըստ օրինի զոր խօսէր, ոչ առ տգիտութեան լեզուին այլ առ խռովութեան սրտին. ուստի և վաղվաղակի կարճեալ զբանն՝ էջ ի նաւակն, ելին և գնացին առ իւրեանս մռմռալով։

Յայսմ վայրի ահա երևեցաւ ի քառայ պուռնուն ի ներքոյ լերանցն վօլիկ մի տաճկի, յորում էին արք իբր երկոտասան, տեսին զնա մոսկոֆեանք և ուղղեցին զնաւն ի վերայ. զոր օրինակ յարձակիցի կատու մի ի վերայ մկան՝ այնպէս յարձակեցաւ ի վերայ նորա. համարեցաւ զնա փափկիկ պատառ մի ծաքեալ ի բերանի իւրում, միայն կլանելն